



*ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Տիգրան Օգանեզով, փորձագետ, Երևան, 19 փետրվարի 2019թ.





ՎԵՐԼՈՒԾՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Թիրախային ոլորտ VIII

Ջրահեռացման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում

Թիրախային ոլորտ IX

Չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքեր

Թիրախային ոլորտ X

Կեղտաջրերի կոլեկտիվ կայաններից առանց մաքրման հեղեղաջրերի արտահոսքի դեպքեր՝ կոյուղու համակարգից դեպի արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրեր

Թիրախային ոլորտ XI

Կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ելակետային վերլուծության իրականացման ընթացքում վեր են հանվել ուսումնասիրվող թիրախային ոլորտի

Գոյություն ունեցող օրենսդրական և ինստիտուցիոնակ շրջանակները

Ներկայիս կարգավիճակը և հեռանկարները

Իրականացվող համապատասխան ընթացիկ և նախատեսվող միջոցառումները

Վերլուծության իրականացման արդյունքների հիման վրա կազմվել է **Փորձագիտական գնահատում:**



ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2017թ հունվարի 1-ից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն վարձակալության պայմանագրի շրջանակներում ստանձնեց միասնական օպերատորի պարտականությունները:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն ունի բավական զարգացած ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման համակարգ:

- ✓ 3700 կմ ընդհանուր երկարությամբ ջրահեռացման ցանց,
- ✓ 6 կեղտաջրերի մաքրման կայան,
- ✓ 8 ջրահեռացման համակարգի պոմպակայան,
- ✓ 350 կմ երկարությամբ մակերևութային ջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ:



ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կեղտաջրերի մաքրման կայաններ

ՀՀ տարածքում առկա 20 ԿՄԿ-ից գործում են միայն 7 ԿՄԿ

- ✓ Երևանի «Աերացիա»,
- ✓ Մարտունի,
- ✓ Վարդենիս,
- ✓ Գավառ,
- ✓ Ջերմուկ
- ✓ Դիլիջան
- ✓ Փարաքարի կենսաբանական լճակ

Բոլոր գործող ԿՄԿ-երն իրականացնում են մեխանիկական մաքրում, բացառությամբ Փարաքարի կենսաբանական լճակի, ուր իրականացվում է մեխանիկական և մասնակի կենսաբանական մաքրում:



ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կոյուղու համակարգեր

- ✓ Կոյուղու համակարգերի սպասարկման տարածքը սահմանափակ է և ներառում է բնակչության միայն 70%-ը, որից քաղաքային բնակչության համար հասանելի՝ 96.4% գյուղական բնակչության համար հասանելի՝ 17%
- ✓ Կենտրոնացված կոյուղու համակարգից օգտվում է 65 բնակավայր (44 քաղաք, 21 գյուղ):
- ✓ Ավելի քան 900 բնակավայրում կոյուղու ցանցը բացակայում է:
- ✓ Քաղաքային կոյուղացանցերը և կոլեկտորները հիմնականում ինքնահոս են, բացառությամբ մի քանի բնակավայրերի:
- ✓ Գյուղական համայնքների գերակշիռ մասն օգտվում է հորատիպ զուգարաններից, որոնք կառուցված են գյուղացիների մասնավոր տարածքներում: Արդյունքում, կեղտաջրերը ինֆիլտրվում են հողի մեջ և ներթափանցում գրունտային ջրեր՝ աղտոտելով դրանք:



ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կոյուղու համակարգեր

- ✓ Վթարային վիճակում է գտնվում շուրջ 40 տարի առաջ կառուցված ցանցերի և կոլեկտորների զգալի մասը: Ջրամատակարարման անկայուն ռեժիմը նույնպես պատճառ է դառնում կոյուղացանցերի և կոլեկտորների խցանմանն ու վնասմանը:
- ✓ 2017թ. ընթացքում հանրապետության մի շարք բնակավայրերում իրականացվել են կոյուղատար ցանցի վերանորոգում, խցանումների վերացում, վթարվածների փոխարեն նոր կոյուղագծերի կառուցում
- ✓ Միջազգային դրամատու և վարկային կազմակերպությունների օգնությամբ 2013-2017թթ.-ին իրականացվել են 8 քաղաքի, այդ թվում Վանաձորի և Գյումրիի, և 37 գյուղական բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքները:



ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հեղեղատար համակարգեր

Հեղեղաջրերի հեռացման և կոմունալ - կենցաղային կեղտաջրերի համակարգերը Հայաստանում հիմնականում առանձնացված են և կապ չունեն իրար հետ:

Քաղաքային և գյուղական բնակավայրերի հեղեղատարների չմաքրված արտահոսքը բաց ջրավազան չի կարգավորվում համապատասխան իրավաբանական ակտերով և դրանց ինստիտուցիոնալ կառավարումը համակարգված չէ:

Քաղաքներում հեղեղատարների կառավարումը և շահագործումը իրականացվում է ինչպես համայնքների, այնպես էլ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից:

Արտադրական տարածքներում առկա հեղեղատարների կառավարումը և շահագործումն իրականացվում է տվյալ արտադրական ձեռնարկության կողմից:

Հեղեղների հոսքաջրերն առանց մաքրման թափվում են բաց ջրավազան, չնայած նրան, որ երբեմն դրանցում աղտոտման մակարդակը մի քանի անգամ գերազանցում է հոսքաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքը:

Հանրապետությունում չի իրականացվում հեղեղատար համակարգերի և հեղեղային հոսքերի մոնիթորինգ և հսկողություն:



ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կեղտաջրերի մաքրման կայաններ

- ✓ Առաջիկա տարիներին նախատեսվում է Երևանի «Աերացիա» կայանի վերակառուցման 2-րդ փուլի շինարարությունը:
- ✓ Քաղաքի քաղաքային համայնքի զարգացման 2017-2021 թթ. հնգամյա ծրագրի շրջանակում նախատեսվում է վերանորոգել, տեխնիկապես վերազինել և վերագործարկել կեղտաջրերի մաքրման կայանը:
- ✓ Մշակման փուլում են Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների նախագծանախահաշվային փաստաթղթերը:



ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կոյուղու համակարգեր

- ✓ Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է շարունակել բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:
- ✓ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրի ներքո իրականացվելիք առաջնահերթ գործողություններից մեկը ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների իրականացումն է:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ VIII

ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՃԱՆԱԶՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ջրահեռացման ոլորտի զարգացման ռազմավարությունը պետք է ներառի կենսաբանական մաքրման հնարավորություններով կեղտաջրերի մաքրման կայանների նախագծումը և կառուցումը:
- ✓ Կեղտաջրերի հավաքումը և մաքրումը ոչ միայն հանրապետական, այլև տարածաշրջանային պահանջված խնդիրներ են, այդ իսկ պատճառով դրանք պետք է արժանանան թե տարածաշրջանի մասնակիցների, թե միջազգային բնապահպանական, ֆինանսական և այլ հետաքրքրված կազմակերպությունների բավարար ուշադրությանը:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ VIII

ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՃԱՆԱԶՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ապահովել կոյուղու համակարգի և կեղտաջրերի մաքրման կայանների նախագծումը, կառուցումը և տեղադրումը նախագծվող և կառուցվող բոլոր տեսակի (այդ թվում արդյունաբերական, հանրային և մասնավոր) նոր կառուցների համար:
- ✓ Ապահովել 1000 և ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում կոյուղու համակարգի ներդրման և ԿՄԿ-ների կառուցման պարտադիր պահանջը:
- ✓ Սահմանել առավել խիստ հսկողություն կեղտաջրերի հեռացման և մաքրման գործող պետական նորմերի և պահանջների նկատմամբ:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ IX

ՉՄԱՔՐԿԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԴԵՊՔԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ավարտին հասցնել նախատեսվող և կառուցվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը:
- ✓ Հանրապետության խոշոր քաղաքների մաքրման կայանների վերականգնման կամ նորերի կառուցման համար մշակել համապատասխան նախագծեր:
- ✓ Կյանքի կոչելով համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ պարտադրել արդյունաբերական ձեռնարկություններին՝ իրականացնել արտահոսող կեղտաջրերի պատշաճ մաքրում կեղտաջրերի մաքրման կայանների միջոցով:
- ✓ Բարելավել ոչ կենցաղային օգտագործողների կողմից հեռացվող կեղտաջրերի մոնիթորինգը, նախնական մաքրման պահանջները և իրավակիրարկումը:
- ✓ Արդյունաբերական օգտագործողներին խրախուսել և/կամ պարտավորեցնել միանալու գործող կոյուղու ցանցերին:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ IX

ՉՄԱՔՐԿԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԴԵՊՔԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ջրային ռեսուրսների աղտոտումը կանխելու նպատակով սահմանել անասնաբուժական, թռչնաբուժական և խոզաբուժական ֆերմաներից գոմաղբի անվտանգ տեղափոխման, պահպանման, վնասազերծման/վերամշակման և հետագա օգտագործման պահանջներ:
- ✓ Սահմանել հսկողության և պատժի/տուգանքների առավել խիստ մեխանիզմների համակարգ չմաքրված կեղտաջրերի ջրային ռեսուրսներ և ոռոգման համակարգեր արտահոսքի դեպքերը կանխելու նպատակով:
- ✓ Կոյուղացանցերի և կոյուղու կուլեկտորների անմխիթար վիճակի բարելավման և պատշաճ շահագործման նպատակով կատարել առավել մաշված հատվածներում (մեկ կիլոմետրին 3-ից ավելի վթար ունեցող հատվածներ) կապիտալ վերանորոգում, նոր կուլեկտորների և կոյուղացանցերի փուլային կառուցում և հների վերակառուցում, նոր սարքավորումների և մեքենաների ձեռք բերում:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ X

ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄԱՔՐՄԱՆ
ՀԵՂԵՂԱԶՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԴԵՊՔԵՐ՝ ԿՈՅՈՒՂՈՒ
ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԴԵՊԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՁՐԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ուսումնասիրել և գույքագրել առկա բոլոր հեղեղատար համակարգերի վիճակը, բացահայտել հիմնական թերությունները:
- ✓ Ուսումնասիրել հեղեղատար համակարգերից բաց ջրավազաններ առանց մաքրման հեռացվող հեղեղաջրերի որակը:
- ✓ Ուսումնասիրել առանց մաքրման հեռացվող հեղեղաջրերի ազդեցությունը արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի վրա:
- ✓ Իրականացնել համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ չմաքրված հեղեղաջրերի բաց ջրավազաններ արտահոսքի դեպքերը կանխարգելելու նպատակով:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ X

ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄԱՔՐՄԱՆ
ՀԵՂԵՂԱԶՐԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԴԵՊՔԵՐ՝ ԿՈՅՈՒՂՈՒ
ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԴԵՊԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ներգրավել համապատասխան ներդրումներ մայրաքաղաքում և առնվազն ևս երկու քաղաքում հեղեղատար համակարգերի վերականգնման և արդիականացման նպատակով:
- ✓ Մշակել հեղեղաջրերի հոսքերի կառավարման ռազմավարություն և քաղաքականություն:
- ✓ Խստորեն սահմանափակել սելավաջրերի փոխադրման նպատակով կոյուղու ցանցի օգտագործումը, և բացահայտել դրանց հեռացման այլընտրանքային տարբերակներ:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ XI

ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԵՐԻ ՄԵՉ
ԱՐՏԱՀՈՍԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԴԵՊՔԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Ուսումնասիրել և հայտնաբերել կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակին առնչվող օրենսդրական դաշտի բացերը:
- ✓ Մշակել և սահմանել մաքրման կայաններից բաց ջրավազաններ արտահոսող ջրերի որակի նորմերը և հեռացման կարգը:
- ✓ Հանրապետության խոշոր քաղաքների մաքրման կայանների վերականգնման կամ նորերի կառուցման համար մշակել համապատասխան նախագծեր:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏ XI

ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԵՐԻ ՄԵԶ
ԱՐՏԱՀՈՍԱԾ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԴԵՊՔԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ✓ Կյանքի կոչելով համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ պարտադրել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին բարեխղճորեն իրականացնել արտահոսող կեղտաջրերի պատշաճ մաքրում կեղտաջրերի մաքրման կայանների միջոցով:
- ✓ Բարեկարգել հանրապետությունում առկա որակական մոնիտորինգի համակարգը, մաքրման կայաններից արտահոսող ջրերի որակական մոնիտորինգի պատշաճ իրականացման նպատակով:
- ✓ Սահմանել պատշաճ վերահսկողություն բաց ջրավազաններ հեռացվող կեղտաջրերի որակական ցուցանիշների նկատմամբ:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ